

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ԴՈՒԿԱՍՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ
24.05.2024**



Միրելի՛ շրջանավարտներ

Շնորհավորում եմ ձեզ դպրոցական ուսումնառության շրջանի ավարտի և անմոռանալի տոնի՝ Վերջին դասի կապակցությամբ:

Այս տարիների ընթացքում ձեր կողքին էին ուսուցիչները. նրանք մեծահոգաբար ձեզ են նվիրել իրենց փորձը, անհանգստացել ձեզ համար, ուրախացել ձեր հաղթանակներով և յուրաքանչյուրիդ դաստիարակել այնպես, որ մեր երկրի արժանավոր քաղաքացին դառնաք: Երբե՛ք մի մոռացե՛ք նրանց, ովքեր իրենց ուժն ու հոգին են ներդրել այս ամենի համար: Շնորհակալություն, հարգելի՛ ուսուցիչներ, ջերմության, բարության, իմաստության, արհեստավարժության և ձեր աշխատանքին նվիրվածության համար, ոչ միայն գիտելիք տալու, այլև հոգատարության համար: Աշակերտների հաղթանակները տարբեր ասպարեզներում հավասարապես ձեր նվաճումներն են:

Միրելի՛ շրջանավարտներ, այսօր դուք յուրջ որոշումների շեմին եք: Թո՛ղ որ այն գիտելիքները, որ տվել է դպրոցը, օգնեն իրականացնել բոլոր ծրագրերն ու երազանքները: Եվ անկախ նրանից, թե ինչ ճանապարհ եք ընտրում, թո՛ղ ձեզնից յուրաքանչյուրը դառնա Հայաստանի Հանրապետության գնահատելի քաղաքացի, դառնա իր ընտրած մասնագիտության մեջ արհեստավարժ, նաև լինի Սյունիքի ու իր հայրենի բնակավայրի նվիրյալը:

Այսօր՝ հատուկ երախտագիտությունս նաև մեր շրջանավարտների ծնողներին, քանի որ երեխաների հաջողությունն առաջին հերթին իրենց հաջողությունն է, որի համար նրանք այնքան սեր, հոգատարություն և համբերություն են ներդրել:

Բոլորիդ, ում համար այսօր վերջին անգամ հնչում է դպրոցական զանգը, մաղթում եմ, որ համարձակ ու վստահորեն քայլեք կյանքի միջով, չերկնչեք դժվարություններից, հավատաք ձեր ուժերին, ցանկանում եմ ամենքիդ նորանոր հաջողություններ, իրականացված նպատակներ և նոր հաղթանակներ:

Միրելի՛ շրջանավարտներ, թո՛ղ ձեր մտքերը լինեն բարի, իդձերը՝ թևավոր և անցնելիք ուղին՝ պայծառ:

Ձեր առջև դրեք ամենահամարձակ նպատակները և կյանքի կոչեք, քանզի երիտասարդ եք, ակտիվ, ունեք ներուժ դրա համար: Ձեր ծնողները, ուսուցիչներն ու բոլորս հավատում ենք ձեզ, և վստահ եմ, որ կարդարացնեք մեր հույսերը:

Մրտանց ցանկանում եմ, որ լինեք երջանիկ ու ապրեք խաղա՛ղ երկրում:

Բարի՛ երթ 2023-2024 ուստարվա շրջանավարտներին: